ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N __1_____

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «__27__» __հունվարի_____ 2023. թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիան (այսուհետ՝ պատվիրատու), ի դեմս ակադեմիայի նախագահ Ա.Սաղյանի, որը գործում է ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և_ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարան ՊՈԱԿ__-ը(այսուհետ՝ Կազմակերպություն),

(կազմակերպության անվանումը)

ի դեմս տնօրեն (ռեկտոր) _Մայա Գրիգորյան___ -ի, որը գործում է Կազմակերպության

(անուն ազգանուն)

կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝Որոշում),«___Գրադարանային ծառայություն_____» ծրագրի

(ծրագրի անվանումը)

(այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2023. թվականի պետական բյուջեով նախատեսված ____150630.1/Մեկ հարյուր հիսուն միլիոն վեց հարյուր երեսուն հազար հարյուր __ ՀՀ դրամ գումար,նեռարյալ ավելացված արժեքի հարկը/ԱԱՀ/ իսկ Կազմակերպությունը

(թվերով և բառերով)

պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ն գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի նախագահությանը հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ նախագահությանը,

2.4.6 ՀՀ ԳԱԱ նախագահությանը ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Նախագահություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նախագահության հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 22-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է _150.630.100_Մեկ հարյուր հիսուն միլիոն վեց հարյուր երեսուն հազար հարյուր __ ՀՀ դրամ:

(թվերով և բառերով)

4 Մոնիթորինգ

4.1 Նախագահությունը ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է նախագահության կամ նրա կողմից լիազորված անձի կողմից;

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավեր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ;

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ;

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախագահությունը Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Նախագահությունը Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 30126.0, 2-րդ եռամսյակում՝ 37657.6, 3-րդ եռամսյակում՝ 37657.5, 4-րդ եռամսյակում՝ 45189.0 հազար ՀՀ դրամ:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախագահությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է

9.2.1Կազմակերպության կողմից Նախագահություն ներկայացված Ծրագրի հայտը:

9.2.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրություն/Հավելված1/

9.2.3 Նախահաշիվ /Հավելված 4/

9.2.4 Տնտեսական և այլ ծախսեր /Հավելված5/

9.2.5 Հաստիքացուցակ;

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն	__ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարան___ՊՈԱԿ_____
	_____
	(կազմակերպության անվանումը)
	___ք.Երևան Մ.բաղրամյան
ք. Երևան, պ.Մարշալ Բաղրամյան 24	24/6_____
	(կազմակերպության հասցեն)
ՀՀ ֆին.նախ.գործառ.վարչութ.	_Հ/Հ 900018005448_____ՀՀ ՖՆ կենտր.
հ/հ900011024115	գանձապետարան_____ՀՎՀՀ 00009631_____
	(կազմակերպության բանկային վավերապայմանը)
ՀՀ ՖՆ կենտրոնակ	
Նախագահ՝ _____	
(ստորագրություն)	
Ա.Մաղյան	Տնօրեն (ռեկտոր)՝ _____
	(ստորագրություն)
	_Մայա __Գրիգորյան_____
	(անուն, ազգանուն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
«27» 01 2023 թ.
N 1 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ-ի նախագահ Ա.Սաղյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) __Մայա Գրիգորյանը_ը, վկայում ենք, որ
(անուն, ազգանուն)

Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «__27__» __01_____ 2023. թ.
N ____1_____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ _150630.1/Մեկ արյուր հիսուն միլիոն վեց հարյուր երեսուն հազար հարյուր___ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ԱԱՀ_;_
(թվերով և բառերով):

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ

Նախագահ՝

(ստորագրություն)

Աշոտ Սաղյան

Կազմակերպություն

Տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն)

___Մայա Գրիգորյան_____
(անուն, ազգանուն)

Հավելված N 4
«___27__» _____01_____ 2022 թ.
N ___1_____ պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«_____Գրադարանային ծառայություն_____» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	116371.2	*23274.2*	*29092.8*	*29092.8*	*34911.4*
2	տնտեսական և այլ ծախսեր	9153.9	*1830.8*	*2288.5*	*2288.5*	*2746.1*
3	ԱԱՀ	25105.0	*5021.0*	*3276.2*	*3276.2*	*7531.5*
ԸՆԴԱՄԵՆԸ		150630.1	*30126.0*	*37657.5*	*37657.5*	*45189.0*

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (___Մայա Գրիգորյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (_Սիլվա Հակոբյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված N 4.1
«__27__» _____01_____ 2023 թ.
N __1__ պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ *

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	6715.6
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*4200.0*
	գազի ծառայություն	*1100.0*
	ջրամատակարարման ծառայություն	*400.0*
	կապի ծառայություն	*690.0*
	աղբահանություն	*325.6*
2	Գույք	405.0
3	Սարքեր և սարքավորումներ	
4	Նյութեր և ապրանքներ	870.0
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Տրանսպորտային ծախսեր	525.0
8	Այլ ծախսեր	638.3
	ԱԱՀ	25105.0
Ընդամենը		34258.9

Կազմակերպության տնօրեն՝ _____ (____Մայա Գրիգորյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (____Սիլվա Հակոբյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ ԳԱԱ ի դեմսՆախագահ Աշոտ Սաղյանի և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը, ի դեմս տնօրեն/ռեկտոր Մայա Գրիգորյանի, հանդիսանալով «27» հունվարի 2022թ. կնքված գիտական և գիտատեխնիկական գործունեության **ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման** ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N 1 պայմանագրի Կողմեր, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ Կողմերն ամբողջությամբ իրականացրել են պայմանագրով իրենց վրա դրված պարտավորությունները:

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԳԱԱ
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան ՊՈԱԿ Տնօրեն/ռեկտոր՝ _____ (ստորագրություն) Մայա Գրիգորյան (անուն, ազգանուն.) «20» հունվար 2023 թ.	ՆԱԽԱԳԱՀ՝ _____ (ստորագրություն) ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ (անուն, ազգանուն.) «20» հունվար 2023 թ.
Կ.Տ.	Կ.Տ.